

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 6

ԳՊՄԻ պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի 20. 01. 2015թ. նիստի՝

մասնակցությամբ խորհրդի 14 անդամների,

նախագահությամբ դեկան Ս.Հայրապետյանի

ՕՐԱԿԱՐԳ - 1. Պատմաբանասիրական ֆակուլտետի հեռակա համակարգի ուսանողների ամփոփիչ ստուգումների հարցատոմսերի հաստատում:

2. Հեռակա համակարգի 5-րդ կուրսերի ուսանողների մանկավարժական պրակտիկայի վայրերի քննարկում եւ հաստատում

3. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - Մասնագիտական ամբիոնների վարիչների հաղորդումները ֆակուլտետի հեռակա համակարգի ուսանողների ամփոփիչ ստուգումների հարցատոմսերի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.Խաչատրյան, Գ.Խաչիկյան, Ե.Վարդանյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացված՝ ֆակուլտետի հեռակա համակարգի ուսանողների ամփոփիչ ստուգումների հարցատոմսերը:

ԼՍԵՑԻՆ - Մասնագիտական ամբիոնների վարիչների հաղորդումները հեռակա համակարգի 5-րդ կուրսերի ուսանողների մանկավարժական պրակտիկայի վայրերի ընտրության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.Խաչատրյան, Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան, Ս.Հայրապետյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել մասնագիտական ամբիոնների վարիչների կողմից ներկայացված հեռակա համակարգի 5-րդ կուրսերի ուսանողների մանկավարժական պրակտիկայի վայրերը:

Օրակարգի ընթացիկ հարցերից՝

ԼՍԵՑԻՆ - ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը «Հայ ասպետ» հեռուստախաղի շրջանակներում համալսարանական քառամյա մրցա

խաղին ֆակուլտետի թիմի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Համբարյան, Հ.Խորիկյան, Ա.Հովհաննիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Ի գիտություն ընդունել ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը «Հայ ասպետ» հեռուստախաղի շրջանակներում համալսարանական քառամյա մրցախաղին ֆակուլտետի թիմի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին եւ այդ ուղղությամբ թիմի ու նրա ղեկավարներ Գ.Համբարյանի եւ Հ.Խորիկյանի աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի ձմեռային քննաշրջանի ամփոփիչ ստուգումների ժամանակացույցի մասին

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Խաչիկյան, Ե.Վարդանյան, Մ.Խաչատրյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի ձմեռային քննաշրջանի ամփոփիչ ստուգումների ժամանակացույցը եւ այն դնել գործադրման մեջ ա/թ. հունվարի 29-ից:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը առկա ուսուցման համակարգի արտաժամկետ լուծարքի շրջանի մասին՝ կապված հանրապետական ուսանողական հիմնադրամի /ՀՈԻՀ/ կողմից անցկացվող կրթաթոշակի մրցույթի հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Խաչիկյան, Ա.Հովհաննիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Նկատի ունենալով հանրապետական ուսանողական հիմնադրամի /ՀՈԻՀ/ կողմից անցկացվող կրթաթոշակի մրցույթին հնարավորինս շատ սոցիալապես անապահով ուսանողների մասնակցության ապահովման հպատակահարմարությունը՝ դիմել ռեկտորատին առկա ուսուցման միայն առաջին կուրսերի՝ նման կարգավիճակ ունեցող ուսանողների համար լուծարքային քննաշրջանի ժամկետները առաջ բերելու /հունվարի 26-փետրվարի 2/ միջնորդությամբ:

2. Հաստատել հանրապետական ուսանողական հիմնադրամի կողմից անցկացվող կրթաթոշակի մրցույթին ֆակուլտետից մասնակցող յոթ ուսանողների թեկնածությունները:

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը Հայոց ցեղասպանության 100 ամյակի կապակցությամբ ֆակուլտետի կողմից առաջարկվող միջոցառումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան, Մ.Խաչատրյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց ցեղասպանության 100 ամյակի կապակցությամբ ֆակուլտետը կանցկացնի հետևյալ միջոցառումները.

1. «Ոգեկոչում» թեմայով համաինստիտուտային ստեղծագործական մրցույթ /նկար, քանդակ, արձակ կամ չափածո շարադրանք, կատարողական վարպետություն/՝ 23-28 մարտի,
2. 100-ամյակի ծառատունկ ինստիտուտի այգում /100 շիվեր/՝ 11 ապրիլի
3. «Հիշիր եւ պահանջիր» խորագրով հուշ-միջոցառում բուհի միջին մասնագիտական կրթության բաժնի ուսանողների ուժերով՝ 15 ապրիլի:
4. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողության հանդիսավոր նիստ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցիկապակցությամբ՝ 21 ապրիլի
 - մրցույթի արդյունքների ամփոփում եւ մրցանակաբաշխություն
 - հրավիրված ցեղասպանագետների եւ տեղի գիտնականների 6 զեկուցումներ
5. Մոմավառություն Սբ Հակոբ եկեղեցու բակում եւ ուսանողական երթ՝ 22 ապրիլի,
6. Ուսանողական ընթերցումներ «Հիշենք անցյալը հանուն ապագայի» թեմայով պատմության բաժնի ուսանողների ուժերով՝ 12-13 մայիսի,
7. Աշակերտական ընթերցումներ՝ «Մեծ եղեռնը եւ գրականությունը» թեմայով՝ 18-19 մայիսի

8. Կլոր սեղան Միքայել եպս. Աջապահյանի մասնակցությամբ՝ «Ճանաչում եւ հատուցում» թեմայով՝ 7 մայիսի:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի ուսումնական կաբինետներում ու մասնագիտական լսարաններում օգտագործվող գույքի նորացման արհրաժեշտության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հովհաննիսյան, Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Դիմել ինստիտուտի ռեկտորատին ֆակուլտետի ուսումնական կաբինետներում ու մասնագիտական լսարաններում օգտագործվող հին գույքի նորացման արհրաժեշտության մասին՝ ներկայացնելով առաջնահերթություններն ըստ մասնագիտական ամբիոնների պահանջի:

Խորհրդի նախագահ՝

**Ֆակուլտետի դեկան
նիստի քարտուղար**

**Ս. Հայրապետյան
Է. Չոբանյան**